

ՏՈՐԵԿԱՆ ՀՈՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ Ս. ԹԱՐԳՄԱՆՉՈՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

18 Մայիս, Հինգշաբթի օր, վերջ գտան Ա. Թարգմանչաց երկ. Վարժարանի գասաւանդութիւնները Յաջորդ օրը սկսան պատրաստութիւնները Պազարին, որ տեղի ունեցաւ 20 և 21 Մայիս, Շաբաթ և Կիրակի օրերուն. Ի վաճառ գրուած էին սանուհիներու ձեռագործները, մեծ խնամքով պատրաստուած Օր. Ռոպէրթա Լրդինի և իր օգնական վարժուհիներուն կողմէ: Նկատի առած Երուառաջէմի (արևելեան բաժին) քաղաքական խառնաշփոթ կացութիւնը, զանց առնուեցաւ այս տարի խրախանքի ու կերուխումի բաժինը: Կային միայն թէյ, կարկանդակ, զովացուցիչներ:

28 Մայիս, Կիրակի կեսօրէ ետք. Ժառանգուարաց Վարժարանի ընդարձակ հանդիսարանին մէջ կայացաւ Մանկապարտէզի Ամավերջի Հանդէսը, ի ներկայութեան ծնողներու և հետաքրքիրներու ստուար բազմութեան: Այս տարի, Նախակըրթարանի առաջին երեք դաստիաններու աշտկերտներուն ալ մաս առին յայտագրի մէջ: Ռուանաւարները, երգերը, պարերն ու տրամախօսութիւնները հաճելի էին ու գրաւիչ և անթերի, որքան սր կրնան ըլլալ երբ կ'որոտարերուին մանկական շրթներէ: Հանդիսականներու հանգագին ծափերը լուսագոյն բարենիչն էին, արուած Մանկապարտէզի երեք չնորհալի վարժուհիներուն իրենց խնամքու աշխատանքին համար:

Հանդէսին կը նախագահէր Վարժարանի բարեկան Տեսուչը՝ Գերշ. Տ. Կիւրեղ եպս. Գորբկեան, որ յայտագրի աւարտին Ծաղիկ զաստանի (և ստով՝ Մանկապարտէզի) ընթացքը աւարտած 10 երկսեռ փոքրիկներուն ձեռքք տուալ վկայական, որով յառաջիկոյ Սեպահմբերին մոււոք պիտի գործեն Նախակըրթարանի բաժինը: Բնելէ ետք պահին յարմար քանի մը խօսք, Տեսուչ - Նախագահ Սրբազնը «Պահպանիչ» վակեց հանդէսը:

Յաջորդ Կիրակի, 4 Յունիս, Երեկոյեան ժամը 6-30 ին, Վարժարանի սրանին մէջ կայացաւ Երկրորդական Բաժնի Ամավերջի Հանդէսը, որուն դարձեալ կը նախահէր Վարժարանի բազմամեայ Տեսուչը: Ներկայ էին Հազեշնորհ Հայրեր, ծնողներ և հրաւիրեալներու ընտիր բազմութիւն մը:

Տեսչութիւնը, ուսուցչական կազմին հետ համախօսութեարդ, գեղեցիկ գաղափարը յղացած էր այս տարուան Հանդէսը նուիրելու Արցախ - Ղարաբաղի. 1988 Փետրուար ամիսէն ի վեր հան կայացած անցուդարձերու կապակցութեամբ: Ընթացաւարտ դաստիանի սաներ հանգամանօրէն անդրադարձան գաւառի անցնալին ու ներկային, ազգագրութեան ու ազգաբնակչութեան մատին կատարուած խմբերգներն ու արտասանութիւններն ալ — առանձնակի և խմբական — կը դառնային գլխաւոր մասում նոյն բեմայի շուրջ: Բոլոր ելոյթներն ալ ըստ բաւականին յաջող էին ու գոհացուցիչ: Ուսուցչական կազմին իննամսեայ տքնաջան ու համբերատար աշխատանքին արգասիքը լաւագէս գնահատուեցաւ հանդիսականներու խոնդագին ծափերով:

Կարճ դադարէ մը ետք, Հանդէսի Երկրորդ բաժնին մէջ, 10 շրջանաւարտները (1 մանչ, 9 աղջիկ) — որոնցմէ 4ը տար, Համաշ ու Արտը) ստացան իրենց վկայականները, իսկ յաջող աշակերտները՝ գիրք - մրցանակներ: Նոյն կերպով Վարձատըրուեցան նուև վարքի և ձեռագործի մէջ բարձր նիշ ապահոված աշակերտներ:

«Հրամանչտի Երգացէն ու Հրամանչտի Ուղերձէն ետք, Տեսուչ Սրբազնը Կարդաց ժամեր իր Տարեկան Տեղեկագրէն (հրամարակուած ամբողջութեան կանխոզ 13 էջերուն վրայ) և իր փակման խօսքին մէջ շեշտեց զերն ու անփոխարինելի առաւելութիւնը Հայ Դպրոցին, տար ափերու վրայ նետուած Հայուն ազգապահպանման գոյապահքարին մէջ: Յետոյ իր օրհնութիւնը տուաւ բռլորին: Տարիներէ ի վեր սովորութիւն դարձած է որ Հանդէսը բացուի Ս. Թարգմանչաց շարականով և փակուի Ս. Աթոռոյ մաղթերդ - շարականով: Այդպէս ալ եղաւ այս տարի: